Ոչ մի նշանաւոր երեւոյթ չէր կորցնում իր հետքը քուրդի կեանքի մէջ. ժողովրդական ոգին իր տաղերով կամ փառաբանում էր մէկի քաջագործութիւնը, կամ պարսաւում էր միւսի թուլասրտութիւնը: Ծածկոեցաւ մէկը թշնամուց կամ խոյս տոեց նա կռոի դաշտից, միւս օր կանայքը եւ աղջիկները յօրինում էին նրա մասին զանազան կծու պարսաւներ, եւ երգը արագ թռչում էր ամէն երեխայի, ամէն չափահասի բերանից:

Թուրը, մի ջուխտ ատրճանակ, վահանը եւ նիզակը քրդի մարմնի անդամներն են, որոնք միշտ մնում են նրանից անբաժան. հրացանը նա գործ է ածում մեծ կռիւների մէջ: Թամքած ձին, որ միշտ պատրաստ է նրա չադրի առջեւ, քրդի հաւատարիմ ընկերն է. նրան սիրում է տէրը աւելի, քան իր կնոջից, աւելի, քան իր որդիներից: Քուրդը իր չադրի մէջ հիւրասէր էր որպէս Աբրահամ, բայց նա չի խնայելու կողոպտել նոյն հիւրին, եթէ նա կը հանդիպէր մէկ մղոն հեռու իր չադրից: Արեան վրէժխնդրութիւնը, որպէս ամէն կիսավայրենի ցեղերի մէջ, նոյնպէս քրդի մէջ, անցնում է սերնդից սերունդ: Սպանոածը հանգիստ չէ իր գերեզմանի մէջ, քանի որ նրա արեան փոխարէնը չէր առնոել սպանողից կամ նրա մօտ ազգականներից: Սպանողը այն ժամանակ միայն ազատ է մնում վրէժխնդրութիւնից, երբ գնում էր իր ոսոխի տունը, իր սուրը գցում է նրա ոտքի տակ եւ ներողութիւն է խնդրում: Բայց հազիւ կը գտնոէր մի քուրդ, որ խոնարհոէր մինչ այն աստիճան ստորութեան: Քուրդը քինախնդիր է եւ ոխերիմ. նա մինչեւ մահ չէ մոռանում վիրաւորանքը կամ անպատոութիւնը, քանի որ դեռ լիակատար բաւականութիւն չէր ստացել: Նա միեւնոյն ժամանակ շատ հանգամանքներում – հպարտ է եւ ազնիւ: Քուրդը դադարեցնում է իր կռիւը, երբ հակառակ կողմից միջամտութիւն են գործում կանայք: Նա իրան չէ ստորացնում, պատերազմելով իրանից թոյլ արարածների հետ. թէեւ քրդի կինը կռոի ասպարէզում նոյնքան կատաղի է եւ քաջասիրտ, որքան իր ամուսինը:

Կրկին անգամ ամուսնանալը, մեռած կամ սպանոած տղամարդից յետոյ, քուրդ կնոջ համար համարւում է նախատինք: Նա մնում է միշտ այրի, մխիթարում է իրան այն քաղցր յիշողութիւններով, թէ իր այրը մի «լաւ աւազակ» էր, թէ նա մնաց միշտ մաքուր երկչոտութեան արատից, թէ նա երբեք իր թիկունքը չդարձրուց թշնամու դէմ, թէ նա սիրում էր իր ամուսնին, որքան սիրում էր իր արաբական նժոյգին, եւ երբեք նրա սիրտը չգրաւեց ամենագեղեցիկը իր ցեղի աղջիկներից: Եւ մայրն երեխայութիւնից պատմում էր իր զաւակներին հօր գործքերը, խրատում էր հետեւող լինել նրան եւ կրկին բարձրացնել հանգուցեալի յիշատակը խոր գերեզմանից: